# Ուսումնական նախագծի թեմատիկ պլան

## Գեղեցիկի ընկալումը տարբեր ժամանակներում

Առարկան՝ Հասարակագիտություն

Դասարանը՝ 7- րդԱ

Տևողությունը՝ 6 շաբաթ

Նպատակը՝ սովորողները կծանոթանան գեղեցիկի հասկացությանը,կծանոթանան տարբեր ժամանակներում գեղեցիկի չափանիշներին:

Նյութեր՝

1. Դասագրքեր, հոդվածներ և առցանց ռեսուրսներ գեղեցիկի մասին:
2. Գեղեցիկի մասին նկարներ և տեսանյութեր:
3. ՏՀՏ գործիքներ

Վերջնարդյունքը՝ ստանալ տեսանյութ՝ գեղեցիկի ընկալումը տարբեր ժամանակներում :

Ընթացակարգը՝

Շաբաթ 1:

1. Ծանոթացում. Ինչ էգեղեցիկը,գեղեցիկի ընկալումը տարբեր ժողովուրդների կողմից:

Ուսուցիչը հակիրճ պատմական ակնարկ կներկայացնի և կբացատրի ինչ է գեղեցիկը,ինչու է այն կարևոր:

Շաբաթ 2:

2. Կազմակերպչական հարցեր.

Ստեղծել աշխատանքային 3 խումբ՝ բաղկացած 4 հոգուց:

Ուսուցիչը տալիս է խմբերին հստակ առաջադրանքներ և սահմանում վերջնաժամկետ :

Շաբաթ 3:

3. Կատարված աշխատանքների ամփոփում, սխալների ուղղում ուսուցչի կողմից և նոր հանձնարարությունների տրամադրում:

Ուսումնասիրել գեղեցիկի ընկալումը տարբեր ժամանակներում տարբեր ժողովուրդների կողմից:

Շաբաթ 4:

Սովորողները կդիտեն գեղեցիկի ընկալման մասին պատմող տեսանյութ,կդիտեն արվեստի գործեր,հայտնի կտավներ ,որտեղ կփորձեն վեր հանել գեղեցիկի չափանիշները տարբեր ժամանակներում:

Շաբաթ 5: Ստանալ տեսանյութ ,որտեղ մանրամասն կներկայացվի գեղեցիկի ընկալումը տարբեր ժամանակներում:

Շաբաթ 6:

.Նախագծի ներկայացում.

Աշակերտները իրենց դասընկերներին և ուսուցիչներին կներկայացնեն նախագիծը,

կգնահատվեն: